ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

« 11» « ապրիլի » 2019 թ.
Ժամը 11.00

Հանձնաժողովի նախագահ՝
ՎԱ գործերի կառավարչի տեղակալ՝ Ա.Պապիկյան

Անդամներ՝
ՎԱ ԳԿ շահագործման բաժնի ավագ մասնագետ,
շահագործման բաժնի պետի
պարտականությունները կատարող՝ Վ. Իսկանդարյան

ՎԱ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի
հատուկ համակարգերի բաժնի բաժնի պետ՝ Լ.Ավագյան

ՎԱ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապ
հատուկ համակարգերի բաժնի գլխավոր ճարտարագետ՝ Ա. Այվազյան

ՎԱ տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի
հատուկ համակարգերի բաժնի ճարտարագետ՝ Ռ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների
ավագ գործակալ՝ Դ.Գրիգորյան

1. «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4» ծածկագրով մրցույթի մասնակիցների գնային առաջարկների ներկայացման և գնահատման մասին

1.1 Քանի որ հայտերի գնահատման համար պարզաբանումների անհրաժեշտություն էր առաջացել, հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել էր և, պարզաբանում ստանալու նպատակով, հարցում ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ս.թ. ապրիլի 10-ին սահմանված կարգով ստացվել է պարզաբանում, համաձայն որի, եթե հնարավոր է «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից 8 ամսվա համար ներկայացված գնային առաջարկը բաժանման միջոցով 1 ամսվա համար ստանալ համեմատելի գին, ապա այն կարող է համեմատվել մյուս մասնակցի կողմից առաջարկված գնի հետ՝ հիմք ընդունելով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները:

Քանի որ «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված գնային առաջարկում հստակ նշված է,

որ գնային առաջարկը ներկայացված է 8 ամիսների համար մատուցվող ծառայությունների հաշվարկով, ապա հանձնաժողովը որոշեց բաժանման միջոցով ստանալ 1 ամսվա համեմատելի գինը:

1.2 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

N	Անվանում	Բյուջեով նախատեսված գումար	«ԱՅԹԻ 365» ՍՊԸ և «Հիբրիդ Սիսթեմս » ՍՊԸ		«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ	
			Գումարն առանց ԱԱՀ	Ընդամենը գումար	Գումարն առանց ԱԱՀ	Ընդամենը գումար
1	Համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ	8 125 000	6 300 000	7 560 000	6 000 000	7 200 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. **«ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-19/4» ծածկագրով մրցույթի նիստի արդյունքների ամփոփման մասին**

Հանձնաժողովը որոշեց՝

2.1 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել՝

Չ/Բ	Մասնակիցների զբաղեցրած տեղը	Մասնակիցների անվանումը
1	1	«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ
	2	ԱՅԹԻ 365» ՍՊԸ և «Հիբրիդ Սիսթեմս » ՍՊԸ

2.2 Էլեկտրոնային եղանակով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

2.3 Համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. **Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ**

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Կառավարական տուն 1, 18 սենյակ հասցեում, սույն արձանագրության 5.2 և 5.3 կետերով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետի ավարտին հաջորդ աշխատանքային օրը, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ա. Պապիկյան	ԳՊ/ԳԱՊ
Անդամներ՝	Վ. Իսկանդարյան	ԳՊ/ԳԱ
	Լ.Ավագյան	ԳՊ/ԳԱ
	Ա.Այվազյան	ԳՊ/ԲԱ
	Ռ. Հովհաննիսյան	ԳՊ/ԲԱ
Քարտուղար՝	Դ. Գրիգորյան	ԳՊ/ՄՀմ